THE WORLD BANK

Working for a World Free of Poverty

լրատվական հաղորդագրություն

լրատվական հաղորդագրություն
2012/283/ԵԿԱ

Համաշխարհային բանկն աջակցում է Հայաստանի 133.000 բնակիչների ջրամատակարարման բարելավմանը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 21-ը փետրվարի 2012 թ. - Այսօր Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատեց 15 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ Հայաստանի **«Հանայնքային ջրամատակարարման ծրագրի»** ֆինանսավորման համար: Ծրագիրը կնպաստի ջրի որակի և ջրամատակարարման բարելավմանը «Հայջրմուղկոյուղի» ընկերության ծառայությունների մատուցման որոշ տարածքներում:

Ծրագրով նախատեսված միջոցառումներից կշահեն Աշտարակ (Արագածոտնի մարզ), Մասիս (Արարատի մարզ) և Էջմիածին (Արմավիրի մարզ) քաղաքների և հարակից 15 գյուղական բնակավայրերի ավելի քան 133.000 բնակիչներ: Ներդրումների շնորհիվ խմելու ջրի մատակարարման տևողությունը օրական 12 ժամից կհասնի 17 ժամի, կբարելավվի ջրի որակը, կնվազեն ջրի աղտոտման ռիսկերը և կբարելավվի հաճախորդների սպասարկման որակը: Բացի այդ, շուրջ 21.000 բնակիչների տներում կտեղադրվեն ջրաչափեր: Ծրագիրը բազմակողմանի աջակցություն կցուցաբերի հանրային և մասնավոր հատվածներին՝ ստեղծելով ավելի նպաստավոր միջավայր ծառայության մատուցման համար և խթանելով տնտեսական գործունեությունը:

«Այս ծրագիրն աջակցում է ամբողջ երկրում որակյալ խմելու ջուրն ավելի մատչելի դարձնելու Կառավարության ռազմավարությանը, ներառյալ՝ փոքր և միջին քաղաքներում ու գյուղական բնակավայրերում: Սա Համաշխարհային բանկի՝ Հայաստանի հետ Երկրի գործընկերության ռազմավարության կարևոր բաղադրիչ է»,- ասել է **Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի երկրների տարածաշրջանային տնօրեն պրն Ասադ Ալամը**:

Ներկայացված ծրագիրը շարունակում է հաջողությամբ իրականացված «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը» (ՀՋՋԾ) և դրա լրացուցիչ ֆինանսավորման ծրագիրը, և այժմ կընդգրկի նոր քաղաքներ ու գյուղական համայնքներ: Ծրագրի իրականացման տարիներին՝ 2004-2011 թթ., ՀՋՋԾ-ն գրանցել է լավ արդյունքներ, որոնցից օգնտվել են 264.000 տնային տնտեսություններ: Խմելու ջրի մատակարարման միջին օրական տևողությունը 6 ժամից հասցվել է 15 ժամի, նվազագույն ցերեկային ջրամատակարարմամբ քաղաքների տոկոսը 68-ից հասել է 94-ի, վարձի հավաքագրումը 47,9-ից հասել է գրեթե 94 տոկոսի, ջրի՝ ջրաչափային սպառման համար գանձումը 40-ից հասել է 81,2 տոկոսի, իսկ մանրէաբանական անվտանգության ապահովումը 93-ից բարձրացել է 98,2 տոկոսի:

«Մենք հատկապես ուրախ ենք շարունակելու մեր աջակցությունը Հայաստանի գյուղական բնակավայրերում կայուն ջրամատակարարումը մատչելի դարձնելուն՝ հաշվի առնելով դրա սերտ առնչությունն առողջապահական ու շրջակա միջավայրի հարցերին,- **ասել է Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի ղեկավար պրն Ժան-Միշել Հապլին: -** *Առաջարկվող ներդրումները նպատակ ունեն կտրուկ բարելավելու առկա ենթակառուցվածքները՝ կիրառելով տեխնիկապես հիմնավորված, քիչ ծախսատար և հուսալի մեթոդներ»:*

Ծրագիրը ներառում է երեք բաղադրիչ: Առաջին բաղադրիչը (ներդրումներ ջրամատակարարման համակարգերում) ֆինանսավորում է առաջնային վերակառուցման ու վերականգնման աշխատանքների նախագծումը, շինարարությունն ու վերահսկումը: Երկրորդ բաղադրիչը («Հայջրմուղկոյուղու» ներդրումներ) կֆինանսավորի ջրաչափերի ծրագիրը և պոմպակայանների ու ջրամբարների ավտոմատացումը, իսկ երրորդ բաղադրիչը («Հայջրմուղկոյուղու» կառավարման հզորացում) կֆինանսավորի ընդլայնված կառավարման պայմանագիրը և տեխնիկական ուսումնասիրությունները, ինչպես նաև ֆինանսական ու տեխնիկական աուդիտները:

«Վերջին տասնամյակի ընթացքում Կառավարությանը հաջողվել է բարելավել խմելու ջրի մատչելիությունը, մատակարարման հուսալիությունը և որակը՝ հանրային-մասնավոր հատվածների գործընկերության (ՀՄԳ) ուժեղացման շնորհիվ. արդյունքում բարձրացել է աշխատանքի արդյունավետությունն ու հաճախորդների սպասարկման որակը,- **ասել է Համաշխարհային բանկի՝ ծրագիրը մշակած աշխատանքային խմբի ղեկավար պրն Ահմեդ Այվեյդան: -** *Համաշխարհային բանկի աջակցությամբ Կառավարությունը նաև մրցակցային կարգով ընտրել է ջրամատակարարման միջազգային օպերատոր՝ կառավարման պայմանագրով «Հայջրմուղկոյուղին» կառավարելու համար: Առևտրային ու տեխնիկական մեծ կորուստները կրճատելու և ջրամատակարարման ու ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման համար դեռևս անհրաժեշտ են զգալի ներդրումներ»:*

Ծրագրի ընդհանուր արժեքը 18 միլիոն ԱՄՆ դոլար է, որի 3 միլիոն ԱՄՆ դոլարը կհատկացնի Հայաստանի կառավարությունը: ՎԶՄԲ 15 միլիոն ԱՄՆ դոլար վարկն ունի 25 տարվա մարման ժամկետ՝ 10 տարի արտոնյալ ժամկետով:

1992 թ. Համաշխարահյին բանկին և 1993 թ. ՄԶԸ-ին Հայաստանի անդամակցությունից հետո՝ նրա նկատմամբ ՀԲ և ՄԶԸ ստանձնած հանձնառությունների ընդհանուր գումարը կազմում է 1.612 միլիոն ԱՄՆ դոլար:

Կոնտակտներ՝
Երևանում՝ Արմինե Գրիգորյան (374 10) 52 09 92, agrigoryan1@worldbank.org
Վաշինգտոնում՝ Վիգեն Սարգսյան, (202) 458-2736, vsargsyan@worldbank.org
Հեռարձակման հարցերով՝ Նատալյա Սիեսլիկ, (202) 458-9369, ncieslik@worldbank.org

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության մասին լրացուցիչ
տեղեկություններ ստանալու համար խնդրում են այցելել
http://www.worldbank.org.am կայքէջ: